ամենայն բանակօք, ոչ մտանելով երբեք ի քաղաքս. այլ թէ անցցէ յայնկոյս երթալ ի վերայ Հասանին, և եղեալքն ընդ նմա ոչ կամէին, քանզի ձանձրացեալք էին և զդադարումն կամէին։ Այլ նայ կամէր և ոչ կաբէր, խորհէր եւ զհնարս որոնէր զի զինքն փրկէր եւ զայն պարտէր. և անուն քաջութեան զայս ևս ընդունել՝ յուզէր և որոնէր ճարս, և այնու զինչ կամելով առնէր՝ զայն պարտելով և զզօրսն նուաճելով։ Եւ մինչդեռ ի Քէհատխանան էր, հաճէր զմիտս զօրապետաց, զօրագլխաց և աղաներաց սփահուն՝ զռոճիկսն յաւելացուցանելով, և զօրացն ասացեալ թէ Ձձեր յՈւսկիւտարն տալոց եմ. և զօրացն միտ յայս ընթանայր[1]. փութայր զի ի քաղաքս մտցէ եւ արասցեն ընդ նմա զինչ և կամեսցին։ Այլ բազմահնարն այն տայր զօլոֆէն անդ ի Քէհատխանան և այնու ևս փորձէր՝ թէ ո՛յք են զինչ ասացողք և ո՛յք են տրանջողք՝ իմասցի։

Եւ յետ աւուրց Կիրակէի աւուր Հոկտեմբեր ԼԱ, փոյթ ընդ փոյթ յանկարծ անց յՈւսկիւտարն եւ զթագաւորն ընդ իւր, եւ աղաղակել ետ մունետկացն՝ Պատերազմ ունիմ ի վերայ ապստամբին. ամենեքեան պատրաստեսցին որք են ծառայք թագաւորին։ Եւ ամենեքեան դեռ ոչ ևս հանգեալ էին ի տունս աւուրց երկուց, անցան յայնկոյս ի բանակ յՈւսկիւտարոյ։ Եւ յետ Բ աւուր հրամայեաց ամենեցուն ի բաց լինել յինքենէ թէ Զունիմ սէֆէր, փորձելով՝ զայս պատճառ դնելով։ Եւ որք սկսան երթալ յիւրաքանչիւր հանգիստ եւ ի տեղիսն, զնոսա կալեալ զամենեսեան սպանանէր աւր ըստ աւրէ ի ծովափն Ուսկիւտարոյ Լ-ից[2]), Ի-ից և Ժ-ից անպակաս՝ յրսպահոց մեծամեծացն և ոչ յաննչանիցն թէ Դուք Հասանլի էք և ի մօտ

1) ընդանայր. 2) Լ.